6600

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

« 19 » 04 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0039-22

Ձեռնարկողը՝ ***«Դոմում» ՍՊԸ***
Երևան, Ավան վարչ, շրջ փ.148

Գործունեությունը՝ ***Սևակի թաղամաս 20-րդ փողոցի 2-րդ փակուղու 20-րդ հողամասում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0039-22

< 19 **>** 04 **2022թ.**

Պ. Սևակի թաղամաս, 20-րդ փողոց, 2-րդ փակուղու, 20-րդ հողամասի հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Դոմում» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայք մարզ, Առինջ բնակավայր

Ներածական մաս. Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել Կոտայքի մարզի Առինջ համայնքի Պ. Սևակի թաղամաս, 20-րդ փողոցի, 2-րդ փակուղու, 20-րդ հողամասի հասցեում: Նախագծվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.9036հա:

Հողամասի նպատակային նշանակությունը, կամ հողատեսքը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի, այն է՝ 1500 քմ-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական կառույցները:

Նկարագրական մաս. Նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել Առինջի համայնքապետարանի կողմից տրամադրած (22.11.2022թ) ճարտարապետահատակագծային No 281 առաջադրանքը: Գործունեության ընթացքում նախատեսվում է 3246. 0ք. մ կառուցապատման մակերեսով շինությունների կառուցում (վերգետնյա կառուցապատման աշխատանքներ) և 4266.0քմ մակերեսով ստորգետնյա ավտոկայանատեղու կառուցում: Տարածքի բարեկարգումը՝ մայթեր և սալվածքներ, ճանապարհ, կկազմի 2017. 7 ք. մ, իսկ կանաչապատ գոտին՝ 3771.8 ք. մ:

Նախագծվող բնակելի համալիրի հողամասի հարևանությամբ գտնվող շինություններից հեռավորությունը կազմում է 12.8մ: Բնութագրվող հողամասում բացակայում են տեղափոխման ենթակա ինժեներական ցանցերն ու այլ ենթակառուցվածքները:

Նախագծվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը բաղկացած է 4 վերգետնյա մասնաշենքերից և 1 ստորգետնյա մասնաշենքից: «1» մասնաշենքը բաղկացած է 2 ստորգետնյա և 14 վերգետնյա հարկերից, «1'» մասնաշենքը բաղկացած է 2 ստորգետնյա հարկերից, որոնք ծառայում են որպես ավտոկանգառ և միաժամանակ ստորգետնյա հարկերի մակարդակում կապ են հանդիսանում 3 բարձրհարկանի մասնաշենքրի միջև: «2» մասնաշենքը բաղկացած է 3 ստորգետնյա և 15 վերգետնյա հարկերից, իսկ «3» և «4» մասնաշենքերը՝ 3 ստորգետնյա և 14 վերգետնյա հարկերից:

Մասնաշենքերի մուտքերը նախագծվում են ±0.000 նիշից, հետևաբար թեքահարթակների անհրաժեշտություն և կազմակերպում չի նախատեսվում: Շենքերի մուտքերը կազմակերպվում են -3.600, -6.900 և -10.20 նիշերով: Նկուղային հարկերում են տեղակայվելու թվով 179 ավտոկայանատեղիները, որոնց մուտքերը կազմակերպված են առանձին համապատասխան նիշերից և բնակելի համալիրի հյուսիսային և արևելյան հատվածներից: Առաջին հարկի տարածքները և -3.600 կիսանկուղային հարկի որոշ տարածքներ ծառայելու են որպես կոմերցիոն տարածքներ, իսկ վերգետնյա 2-15 հարկերը՝ բնակարան, որոնց ընդհանուր քանակը բնակելի համալիրում կկազմի 473, մասնավորապես, «1», «2», «3» և «4» մասնաշենքերում նախագծվում են համապատասխանաբար 101, 166, 104 և 102 բնակարաններ:

Շենքերի բոլոր բացվածքները դեպի պատշգամբ նախատեսվում են իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից: Շենքերում նախատեսվում է փոքր վերելակ՝ հակահրդեհային պահանջներին համապատասխան, աստիճանավանդակների դռները կունենան ինքնափակման համակարգ:

Շենքերի տանիքը նախատեսվում է հարթ և կազմակերպված արտաքին ջրահեռացման լուծումներով:

Բնակելի շենքի արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք (200մմ հաստ.) ամրանավորված պեմզաբլոկներով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների տեսանկյունից՝ բոլոր պատերը արտաքինից կջերմամեկուսացվեն 80մմ հաստ.հանքաբամբակե ջերմամեկուսիչով և կերեսպատվեն 30մմ հաստ. բազալտե, տրավերտինե և տուֆի սալերով:

Բնակելի շենքերի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսվոմ են առանձնացված հորաններ՝ ինժեներական ցանցերի (ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրասնուցում) իրականացման համար:

Բնակելի շենքի տարածքում նախատեսվում են տեղադրել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսվող աղբամաններ:

Ավտոկայանատեղիների օդափոխման համար նախատեսված են 5 ներածման և 5 արտածման համակարգեր: Ավտոկայանատեղիների օդափոխման համար նախատեսված են նաև 2 ծխահեռացման համակարգեր: Ներածումը կատարվում է վերին զոնայից, իսկ արտածումը՝ կատարվում վերին և ներքին զոնաներից:

Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի ոռոգման ներքին ցանցի միջոցով: Ոռոգման խողովակաշարը կմոնտաժվի 20սմ խորությամբ, իսկ ոռոգման ջուրը կվերցրվի համայնքային ոռոգման ջրագծից:

Կանաչապատ գոտիների բարեկարգման աշխատանքների շրջանակում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի տարածքում կստեղծվի 3771.8ք. մ մակերեսով կանաչ գոտի: Համաձայն կանաչապատման նախագծի, նախատեսվում են արժեքավոր և տեղանքի

բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսականության տնկում, մասնավորապես. կաղնիներ (8 հատ),եղևնիներ (5 հատ),հացենիներ (10 հատ), ակացիաներ (9 հատ), գնդաձև թույաներ (50 հատ), սյունաձև թույաներ (13 հատ), ծորենի (100 հատ), գնդաձև իլենի (110 հատ), սամշիտ (34 թուփ):

Կանաչապատ 3771.8ք. մ մակերեսում կիրականացվի նաև սիզամարգեր, մասնավորապես, 1ք. մ-ում կցանվի 0.033կգ խոտի սերմ, ընդամենը՝ 125կգ խոտի սերմ: Կանաչապատման աշխատանքներում լրացուցիչ բուսահողի մատակարարում չի նախատեսվում: Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի շենքերի սպասարկման աշխատանքների շրջանակում: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված (06/12/2021թ) թիվ ՎՋ 6718/2021 տեխնիկական պայմանի համաձայն: Մասնավորապես, բնակելի համալրի ջրամատակարարման գործընթացը կկազմակերպվի Աշխաբադ փողոցով անցնող d=300մմ, P=3.5 մթն. համայնքային ջրագծից:

Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի արտաքին հեռացումը, նախատեսվում է իրականացնել d=400մմ կոյուղատարից, իսկ տարածքից մակերևութային ջրերի հեռացումը, նախատեսվում է d=400մմ հեղեղատարից, համաձայն տեխնիկական պայմանի, Աշխաբադ փողոցով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կենտրոնացված տաք ջրամատակարարման գործընթաց չի նախատեսվում, վերջինս կկազմակերպվի բնակիչների կողմից՝ լոկալ լուծումների իրականացմամբ:

Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի նախագծվող հողամասին կից անցնող քաղաքային ջրագծից:

էլեկտրասնուցման գործընթացը, համաձայն ՏՊ-ՃՀԱ0.4/0327 տեխնիկական պայմանի (22/12/2021թ.), կիրականացվի «Ավան» 110/10 ենթակայանից՝ կառուցելով նաև 2 հատ 10 կվտ ստորգետնյա մալուխագիծ:

Շինարարական աշխատանքների ընթացքում 32 248խ.մ մնացորդային գրունտը և 140խ.մ շինաղբը ժամանակավոր կկուտակվի շինհրապարակում կազմակերպված կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով կտեղափոխվի և կթափոնակույտվի Աբովյանի համայնքապետարանի կողմից թույլատրված աղբավայր:

Գործունեության ընթացքում կենցաղային աղբի մնացորդները հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբամաններ, որտեղից աղբը կանոնավոր կերպով համայնքի, կամ աղբահանող ընկերության հետ կնքվող պայմանագրային հիմունքներով կհեռացվի հանրային աղբավայր:

Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենասարքավորումները, իսկ բացակայության դեպքում՝ կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից և շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից:

Առանձին ամրանային ձողերը, հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կկատարվի դրանց պահեստավորումը և տեղադրումը:

Բետոնային խառնուրդը՝ միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար կառաքվի անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով Առինջ համայնքին մոտ գտնվող բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ՝ շինարարական կազմակերպության բազա՝ հետագայում շինհրապարակ առաքման նպատակով:

Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Կառուցապատման աշխատանքների տևողությունը հաշվարկվում է 38 ամիս:

Բնութագրվող հողակտորը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում և նախկինում եղել է կառուցապատված, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ: Բնութագրվող տարածքը չի գտնվում պահպանվող գոտում, տարածքում և տարածքի մերձակայքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում,
- շինարական աղբի և ավելորդ ոչ պիտանի գրունտի կանոնավոր հեռացում և թափոնակույտում Աբովյանի համայնքապետարանի կողմից թույլատրված աղբավայր,
- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար փակ աղբամաններ, իսկ կենցաղային աղբը կհեռացվի հասարակական աղբաման,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում,
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- շինհրապարակից դուրս գալիս կապահովվի մեքենաների անիվների լվացման միջոցառումներ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և 09.00-18:00,
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականցվի լիցենզավորված մատակարարից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա,

- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում, այդ թվում հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ,
- կիրականացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, անհատական պաշտպանիչ դիմակներով և այլն,
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի հիմնականում շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում,
- նախագծվող տեղամասում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ ըստ հաստատված նախագծի:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդային քանակները կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Ներկայացվող գործունեության ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը հաշվարկվում է 58872.56հազ. ՀՀ դրամ

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի վարչական շրջանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն և Կոտայքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է հայտում նշված հողամասի առնվազն 40%-ն ապահովել որպես կանաչապատման տարածք:

- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չպահեստավորել:
- Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Դոմում» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Պ. Սևակի թաղամաս, 20-րդ փողոց, 2-րդ փակուղու, 20-րդ հողամասի հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Գ. Մինասյան